Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում փորձագետ ներգրավելու մասին

Աշխատանքների համառոտ նկարագրությունը՝

1. իրականացնում է Հանձնաժողովի Նախագահի և գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) մարդկային ռեսուրսների կառավարման գծով հրամանների և այլ իրավական ակտերի նախագծերի նախապատրաստական աշխատանքները.
2. իրականացնում է Հանձնաժողովի կառուցվածքային, հաստիքային, ինչպես նաև պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու նախապատրաստական աշխատանքները.
3. Հանձնաժողովի ստորաբաժանումների հետ համատեղ իրականացնում է պաշտոնների անձնագրերի, դրանցում փոփոխություններ կատարելու նախագծերի նախապատրաստական աշխատանքները.
4. իրականացնում է Հանձնաժողովի թափուր պաշտոններ (բացառությամբ Գլխավոր քարտուղարի) զբաղեցնելու համար մրցույթի կազմակերպման և անցկացման նախապատրաստական աշխատանքները.
5. իրականացնում է Հանձնաժողովի թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների թեստերում ընդգրկվող մասնագիտական գիտելիքները ստուգող թեստային առաջադրանքների կազմման և տեղեկատվական հարթակում տեղադրման աշխատանքները, ինչպես նաև հարցազրույցի անցկացման ձևաչափի ընտրության մասին համապատասխան առաջարկություն է ներկայացնում Գլխավոր քարտուղարին.
6. իրականացնում է աշխատողների կադրերի ռեզերվի վարման աշխատանքները Տեղեկատվական հարթակում.
7. իրականացնում է Հանձնաժողովի աշխատողներին նշանակման, ազատման, խրախուսանքի, կարգապահական տույժ կիրառելու, ծառայողական քննության անցկացման հետ կապված գործառույթների, արձակուրդ տրամադրելու, գործուղման և այլ իրավական ակտերի նախագծերի նախապատրաստական աշխատանքները.
8. իրականացնում է թափուր պաշտոնների համար անցկացվող մրցույթների հետ կապված նախապատրաստական աշխատանքները, ինչպես նաև ապահովում անցկացվող մրցույթների թեստային և բանավոր հարցաշարերի մշակման և մուտքագրման աշխատանքները.
9. մասնակցում է Հանձնաժողովի և Գլխավոր քարտուղարի հրամանների, որոշումների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին.
10. իրականացնում է Հանձնաժողովի մարդկային ռեսուրսների կառավարման հարցերով բողոքների, դիմումների և առաջարկությունների ուսումնասիրության, վերլուծության աշխատանքների իրականացումը.
11. իրականացնում է Հանձնաժողովի մարդկային ռեսուրսների զարգացման քաղաքականության մշակման աշխատանքները:

Փորձագետներ ներգրավելու ժամկետը՝ մինչև երկու ամիս:

1. Փորձագետի աշխատավարձը կազմում է՝ 328.108 (երեք հարյուր քսանութ հազար հարյուր ութ) ՀՀ դրամ:

Փորձագետների պարտականությունները՝

2. բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքները.
3. սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել փորձագետի աշխատանքների ծրագրով նախատեսված հաշվետվությունները, վերլուծություններն ու տեղեկանքները.
4. պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը.
5. պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները.
6. իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները.

Փորձագետներին ներկայացվող պահանջները՝

1) Բարձրագույն կրթություն.
2) առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
3) ռուսերեն լեզվի ազատ տիրապետում.
4) հաշվետվությունների և այլ փաստաթղթերի հետ աշխատելու փորձ.
5) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում և տեխնիկական առաջադրանքների շակման, վերլուծությունների կատարման փորձ.
6)Հակակոռուպցիոն քաղաքականության, ռազմավարության՝ ներպետական և միջազգային փաստաթղթերի իմացություն.
7) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի անունով **(դիմումի ձևը կցվում է).**
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթուղթ (փաստաթղթեր).
- աշխատանքային գրքույկ (գրքույկի բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ կամ այլ փաստաթուղթ/եր համապատասխան մարմնից/ներից).
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական, կամ համապատասխան տեղեկանք.
- մեկ լուսանկար՝ 3 x 4 սմ չափսի.
- անձնագիր կամ նույնականացման քարտ.

- սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ ունենալու մասին տեղեկանք.
- ինքնակենսագրական.
- հայտարարություն ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին **(հայտարարության ձևը կցվում է):**

Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից ընտրություն կատարելու եղանակներն են՝

- դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն.
- ինքնակենսագրականների ուսումնասիրություն:

Քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են պատճենների հետ միաժամանակ՝ անձամբ և/կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 25 դեկտեմբերի 2020թ.

Փաստաթղթերն ընդունվում են միայն աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-ից մինչև 12.00-ը:

Աշխատանքի վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15
հեռ.՝ 012-77-77-24, էլեկտրոնային փոստի հասցե՝ hr@cpcarmenia.am

3x4 չափսի լուսանկար

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի

գլխավոր քարտուղարի պաշտոնակատար

պարոն Վ.Գասպարյանին

քաղաքացի---------- -ից

(դիմողի անունը, հայրանունը, ազգանունը)

(հեռախոսահամար՝ բջջային և աշխատանքային)

(էլեկտրոնային փոստի հասցեն)

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից հրապարակված հայտարարությանը՝ ներկայացնում եմ որպես փորձագետ ներգրավվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝

1. Անձնագրի (ՀԾ համարանիշ)՝ _____ էջ.
2. դիպլոմի(դիպլոմների)՝ _____ էջ.
3. Աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի՝ ____էջ.
4. Զինվորական գրքույկի (առկայության դեպքում) ՝ _____ էջ.
5. Այլ՝ _____ էջ

Առդիր ---- էջ:

<u>Նախազգուշացված եմ՝ փորձագետի պաշտոնում նշանակվելու դեպքում, կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:</u>

Դիմող՝ _____

ստորագրություն անուն, ազգանուն

«---» ---------- 2020 թ.

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

---------- - ի
(անունը, ազգանունը և հայրանունը)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով՝ հայտնում եմ հետևյալը.

Պաշտոնից ազատվել կամ վերջին մեկ տարվա ընթացքում ծառայությունը դադարեցվել է՝

- Կարգապահական տույժ կիրառելու պատճառով _____
(այո, ոչ)
- Օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու պատճառով _____
(այո, ոչ)
- Օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու պատճառով _____
(այո, ոչ)

4. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու պատճառով _____
(այո, ոչ)

5. ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու պատճառով _____
(այո, ոչ)

6. Ուժի մեջ մտած՝ կայացված մեղադրական դատավճռի պատճառով _____
(այո, ոչ)

7. Երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու պատճառով _____
(այո, ոչ)

Նախազգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

_____
Լրացնողի անուն, ազգանունը, ստորագրություն

«------»---------- 2020 թ.